ՆՈՐ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿ

Հայ գրական-մշակութային ընթացքի եւ պատմության զարգացման տեսանկյունից չափազանց կարեւոր է 2021 թվականին տպագրված եւ ընթերցողների ուշադրությանն արժանացած «19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա»[1] խորագրով համահավաք ժողովածուն, որը կազմել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը։ Գիրքը հրատարակել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպագրատունը՝ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ։

Գրական քրեստոմատիան բոլոր ժամանակներում համահավաք բնագրերի ամենահեղինակավոր տեսակն է։ Այն առավելագույնս արտացոլում է մի որոշակի ժամանակաշրջանի, երկրի, գրականության, ուղղության, հոսանքի, ժանրի գրական զարգացման ընթացքը եւ, որպես այդ ընթացքի համահավաք վերջնարդյունք, լայն տարածում եւ պահանջարկ ունի ընդհանրապես հասարակության տարիքային բոլոր խմբերի համար, թեպետ ժողովածուի «Ամփոփում» բաժնում նշվում է, թե այն ձեռնարկ է «հոգեւոր կրթօջախներում սովորող ուսանողների համար» եւ թե՝ «ուղեցույցի հիմքում ընկած են ծրագրային պահանջները»[2]։

Քրեստոմատիայի հրատարակման նպատակն է ընթերցողին ծանոթացնել ԺԹ. դարի երկրորդ կեսին ապրած եւ ստեղծագործած հայ հեղինակների հետ, նրանց կարեւորագույն ծրագրային երկերին։

Ինչպես քրեստոմատիայում ընդգրկված գրողները, այնպես եւ նրանց երկերը ներկայացված են ժամանակագրական կարգով, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այդ հեղինակների ձեռքբերումների եւ գրականության զարգացման տարբեր շրջափուլերի մասին։ Ուստի չափազանց ուշագրավ է, որ «19-րդ դարի հայ գրա-

---

[1] *«19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա», կազմեց եւ խմբագրեց Վ. Գրիգորյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2021, 588 էջ։*

[2] *Անդ, էջ 9։*

կանության քրեստոմատիա» ժողովածուն ներկայացված է զարգացման հետեւյալ շրջափուլերով՝ «Հայ գրականությունը 19-րդ դարի առաջին կեսին», «Հայ գրականությունը 50—60-ական թվականներին», «Հայ գրականությունը 70—80-ական թվականներին», «Հայ գրականությունը 90-ական թվականներին»։

Որպես հրատարակման հայեցակարգի հիմնարար չափանիշ՝ ուշագրավ են նաեւ միջոցներն ու եղանակները, որոնցով առաջնորդվել է Վաչագան Գրիգորյանը քրեստոմատիայում ընդգրկված նյութերը հավաքելու եւ տպագրության պատրաստելու ճանապարհին։ Կազմողը նախապատվությունը տվել է հայ դասական գրողների հրապարակումների երկու հիմնական սկզբունքների՝ գրական-փաստական *(գրական, քննադատական, հուշագրական, հրապարակախոսական) եւ* գիտական *(յուրաքանչյուր շրջափուլ ունի գրապատմական տեղաշարժերը ներկայացնող ներածական հատված)։*

Քրեստոմատիայում ընդգրկված երկերի ընտրությունը կատարվել է՝ ելնելով հետեւյալ առանձնահատկություններից եւ դրույթներից՝

1. ըստ թեմայի եւ նյութի կարեւորության *(բնագրերի ընտրության հիմնական հատկանիշը). կարեւորվել է երկի ընտրության թեմատիկ ուղղվածությունը, որը համապատասխանեցվել է քրեստոմատիայի ընդհանուր ուղղվածությանը,*

2. ըստ ժանրային դրսեւորումների՝ *ընտրվել են արձակը, քնարերգությունը, հրապարակախոսությունը,*

3. ըստ նպատակի՝ *քրեստոմատիան ուղղված է ոչ միայն հոգեւոր կրթություն ստացող ուսանողներին, այլեւ ընթերցողների լայն շերտերի (ավագ դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ, ուսանողներ, դասախոսներ եւն),*

4. ըստ ժամանակագրության *(քրեստոմատիայում հիմնավորապես տրված են նաեւ գրական գործընթացների շրջաբաժանումները),*

5. ըստ գրապատմական տեղաշարժերի *վերլուծության,*

6. ըստ գրականության պատմության զարգացման ընթացքի *վերլուծության։*

«19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա» ժողովածուն կազմելիս Վաչագան Գրիգորյանն ուղղորդվել է երեք կարեւորագույն հիմնադրույթներով՝ ակադեմիականություն, գիտականություն *եւ* հանրամատչելիություն, *քանի որ այսօրինակ հրատարակությունը չի կարող գոյու-*

թյուն ունենալ ստեղծագործությունների հանրայնացման գործընթացից անկախ։ Քրեստոմատիան իրավամբ կարող ենք անվանել ակադեմիական *եւ* գիտական՝ *նկատի ունենալով այն կազմելու սկզբունքներն ու մոտեցումները, թեպետ* հանրամատչելի *եզրույթը հիշեցնում է, որ կազմողը կարողացել է գրականությունն ուղղել թե՛ մտավորական, թե՛ սովորական ընթերցողի*[3] *հասցեներով։*

Իսկ ո՞վ է սովորական ընթերցող-հասցեատերը, եւ ո՞ւմ համար է նախատեսված այս գիրքը։ «19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա»-ն, ի տարբերություն գրական-գեղարվեստական այլ գրքերի, նպատակաուղղված է ապահովելու հեղինակ—ընթերցող հասարակական հաղորդակցության փոխադարձությունը եւ կրթելու ընթերցողի՝ գեղարվեստական եւ երեւակայական միասնության տիրույթում արտահայտվող գրական-գեղարվեստական զարգացման ընթացքի ընկալումները, որոնք ի սկզբանե ապահովում են տեքստ—ընթերցող փոխադարձությունը։

Այս առումով, Միխայիլ Բախտինը գրում է. «Տպագիր, գրավոր կամ բանավոր տեքստը, ընդհանուր առմամբ, չի հավասարվում ամբողջ ստեղծագործությանը կամ գեղագիտական առարկային։ *Ստեղծագործությունը ներառում է նաեւ անհրաժեշտ արտաբնագրային ենթատեքստը։ Ստեղծագործությունը, ասես, պարուրվում է ձայնային-արժեքային ենթատեքստի երաժշտականությամբ, որով այն ընկալվում եւ գնահատվում է (իհարկե, այդ ենթատեքստը փոխվում է ըստ ընկալման դարաշրջանների, ինչն ստեղծում է ստեղծագործության նոր ընկալում»)*[4]*։*

Կարելի է փաստել, որ քրեստոմատիայի տպագրությունն արժեքավոր է ոչ միայն գրական-մշակութային, այլեւ հասարակական ընկալումների տեսանկյունից, քանի որ գրքի հանրային նշանակության գործառույթները ձեւավորվում են ընթերցողի գեղագիտական կարիքներին համապատասխան, իսկ գրատպության զարգանալուն զուգահեռ՝ արվեստի տիրույթում ընդլայնվել է նաեւ գրքի գործառութային տարածությունը։ Այսպիսով՝ քրեստոմատիայի տպագրվելու հասարակական եւ ստեղծագործությունների համահավաք ժողովածու ունենալու առարկայական պահանջարկները բխում են ընթերցողների գեղագիտական ընկալումներից եւ դրանցով պայմանավորված՝ նրանց կարիքներից։

---

[3] Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, *Տեքստ եւ մեկնություն, Երեւան, 2013, էջ 56—67։*

[4] М. М. Бахтин, Эстетика словесного творчества, Москва, 1979, с. 369.

«19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա»-ի հասարակական գործառույթը կրթական, ճանաչողական, դաստիարակչական եւ գեղագիտական գործընթացներ ապահովելն է, ինչը եւ լիարժեքորեն հաջողվել է ժողովածուն կազմողին՝ Վաչագան Գրիգորյանին։ Հետեւաբար այս արժեքավոր ժողովածուի նպատակային նշանակությունը ոչ միայն գրական-գեղարվեստական ստեղծագործությունների շրջանառության ապահովումն է, այլեւ անցյալի գրական-մշակութային ժառանգության նկատմամբ հասարակություն—գրող—մտավորական—ընթերցող *փոխադարձ հաղորդակցությունը եւ համապատասխան վերաբերմունք ձեւավորելը։*

Միխայիլ Գասպարովը, տարբերակելով քրեստոմատիայի եւ հատընտիրի (անթոլոգիա) կարեւոր դերակատարությունները երեւույթի ընկալման ներքին տիրույթում, ընդգծում է դրանց ուսումնասիրության կարեւորությունը գրական հուշարձանների հետազոտությունների համապատկերում եւ նշում է, թե դրանց ընտրությունը պետք է համապատասխանի ամենախիստ չափանիշներին. «Անթոլոգիան եւ քրեստոմատիան առանձնահատուկ նշանակություն ունեն անցյալի գրականության յուրացման գործում։ Նրանք ստեղծում են բնագրերի կարգաբանության (կանոնիկություն) ընկալում եւ գիտակցություն, որոնք սկզբունքորեն ծանոթ են կրթված մարդուն, եւ դրանով հեշտացնում են միասնական ճաշակի ձեւավորումն ու ընթերցողի հետ փոխըմբռնման հնարավորությունը»[5]։ Սույն ձեւակերպումը որոշակիացնում է այսօրինակ հրատարակությունների նպատակայնությունը եւ ընթերցողների որոշակի շրջանակներին՝ որպես հասցեատերերի, քանի որ քրեստոմատիան, լայն իմաստով, հատընտիր ստեղծագործությունների համահավաք ձեռնարկ է։

«19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա»-ն արձակ եւ չափածո երկերի համահավաք ժողովածու է, որը ներկայացնում է հայ ազգի գրական որոշակի ժամանակաշրջանը, ընթացքը եւ միավորվում է թեմաների ներքին հոգեւոր *շղթայով։ Երկերն ընտրված են ըստ ժամանակագրության եւ ընթացքի կարգաբանության, հեղինակների ընտրության հարցում նույնպես ցուցաբերված է ներդաշնակ, հավասարակշիռ եւ բանական վերաբերմունք։ Այս առումով՝ քրեստոմատիայի գործառույթներն ընդլայնվում են՝ դառնալով* խորհրդատվական, *իսկ գիրքը՝ որպես կառուցվածքային ամբողջություն, ձեռք է բերում* հասարական *բնույթ։ Ստեղծագոր-*

[5] М. Л. Гаспаров, И. В. Корецкая, Русская поэзия серебряного века, 1870—1917. Антология, Москва, 1993, с. 6.

ծությունների ժամանակագրական տեղաբաշխումը ենթադրում է նաեւ քնարերգության եւ արձակի ժանրային եւ սեռային հերթագայություն։ Այս դեպքում առանձնակի տարբաժանում չկա։ Հետեւաբար ժամանակագրական համակարգումը ներառում է նաեւ դաստիարակչական եւ խորհրդատվական նպատակ։ Ժամանակագրական համակարգումը մեծ հնարավորություն է նաեւ՝ հետեւելու հեղինակների գրական զարգացման ընթացականությանը։ Երկերի ընտրության սկզբունքը պայմանավորված է նրանց առարկայական արժեքայնությամբ, հետեւաբար ժամանակագրականությունը չի ազդում ժողովածուի վրա, քանի որ կառուցվածքի ներքին բովանդակությունը ենթարկվում է գրքի համակարգայնության օրենքներին։

«19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա»-ի գրախոսության հիմնական նպատակը բնագրի պատմության վերահաստատումն է։ Հետեւաբար տեքստի զարգացման ո՛ր փուլերը պետք է վերականգնվեն եւ իրացվեն այսօրինակ տպագրություններում՝ բխում է նրանցում ընդգրկված տեքստաբանական եւ պատմագրական երկերի իմաստաբանական համակարգումից։ Կազմողը, որը նաեւ գրքի խմբագիրն է, իմաստաբանական տիրույթում հաշվի է առել երկերի փոխադարձ ձգողականությունն ու տարբաժանումները, ինչպես նաեւ իմաստային կտրուկ փոփոխություններն ու անկումները։

Եզրակացություն։ Ի. դարում եւ ԻԱ. դարասկզբին քրեստոմատիաների եւ հատընտիրների հրատարակման գործընթացները, հանրային պահանջով, հավասար իրավունքներ ձեռք բերեցին՝ գեղարվեստական գրքերին զուգահեռ՝ գրեթե նույն կերպ ազդելով գրական գործընթացի վրա, ինչպես որ գեղարվեստականն է ազդում նրանց տպագրության գործընթացներին։ Հետեւաբար կարելի է փաստել, թե այսօրինակ ժողովածուների տպագրության հիմքում ընկած են հանրույթ—գրականություն *փոխազդեցությունն ու փոխներթափանցումները։*

Մի որոշակի տարածաժամանակում (քրոնոտոպ) գրական քրեստոմատիայի կազմումն ընդգծում է նաեւ հեռացումը գրական գործընթացից, քանի որ ներառում է միայն ժամանակի փորձությունն անցած ստեղծագործությունները։ Եւ այդ համապատկերում մշտապես բացահայտվում են առավել նշանակալի այն գրական երկերը, որոնք կայուն դիմադրողականություն են ցուցաբերում հայ եւ համաշխարհային գրական հոսքի մեջ լինելու գործընթացներին։ Հայ իրականության մեջ Հայաստանի Հանրապետությունում այսօրինակ քրեստոմատիայի հրա-

տարակումը փաստում է գրական գործընթացների կարեւորությունն ու գրականության ընկալման առանձնահատուկ նշանակությունը։

«19-րդ դարի հայ գրականության քրեստոմատիա»-ի կառուցվածքը, որի միջոցով Վաչագան Գրիգորյանը վերստեղծել է ԺԹ. դարի երկրորդ կեսի գրական գործընթացի ամբողջական պատկերը, լիովին բավարարում է կազմողի առջեւ դրված խնդրին եւ նպատակին։ Սովորաբար այդ նպատակի համար օգտագործվում է հրապարակման ժամանակագրական կառուցվածքը, տրվում են գրական ընթացքի բնութագրեր եւն, որոնք եւ իրականացրել է կազմողը։ Ներկայանալի եւ արժեքավոր սույն հրատարակության մեջ հիմնավորապես ընդգրկված են վերոնշյալ ժամանակաշրջանի կարեւորագույն հեղինակները, ուղղությունները, զարգացման միտումները, ընթացքը։

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ ԳԻ